ՀՏԴ 378

ԱրՊՀ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ. ՆՐԱ ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ա.Պ.Պետրոսյան

Պատմության ամբիոն

Հայոց հայրենական պատերազմի ավարտից հետո հարավ-կովկասյան հայկական պետական կազմավորումներում տեղի են ունենում նորիմաստ գործընթացներ, որոնց արժանահավատության գործակիցը երաշխավորված է փոփոխվող հասարակական կյանքով, իսկ սնուցման աղբյուրներն առ այսօր պարզաբանման կարիք ունեն: Նոր իրավիճակը մեզ մղում է ազգային վերածննդի ըմբռնումին, որն անհնարին է տեսնել համալսարանական կրթությունից դուրս:

Հասարակական կյանքն իր բազմիմաստությամբ հանդերձ , շարունակաբար ենթարկվում է որակական տեղաշարժերի, որոնց երաշխավորված լինելը ամենից առաջ պայմանավորված է ոչ թե արտադրության միջոցի (միջոցների) լիբերալացմամբ, այլ սոցիալական միջավայրի ակտիվացմամբ: Նման կարգավիճակ կարող է ունենալ մարդկային այն ներկայացուցչությունը, որն ունի գիտակցված հասարակական խնդիր:

Բացահայտված երկիմաստությունը բնորոշ է դարաբաղյան իրադարձությունների սկզբնաբնիին, որն առաջադրեց ԱրՊՀ-ի ստեղծման գաղափարը, որպես իմաստավորվող հասարակական նոր որակի առաջնեկ, որի աստիճանական կայացման ընթացքն ամրագրում է ԼՂ հանրապետության ներքին կյանքի համայնապատկերը, որտեղ ցանկության դեպքում կարելի է տեսնել և պետք է տեսնել խնդրի ու գաղափարի իրատեսական հարաբերակցություն:

Հանրապետության միակ պետական բուհն ունի բազմիմաստ սոցիալական կառուցվածք, որն ուղղակի արտացոլումն է հանրապետության հասարակական միջավայրի: Նախ փորձենք բնորոշել համալսարանի հիմնական ներկայացուցչությունը՝ ուսանողության սոցիալական կարգավիճակի խնդիրը.

- մասնավորի առումով՝ ուսանողը ներկայացնում է որպես հասարակական թուլություն դրսևորում, քանի որ նա հանդիսանում է հասարակական կյանքն իմաստավորող ամենաստորին բջջի՝ ընտանիքի հուզական միավորը, սա իրատեսական թուլություն է, ուստի այս մասով նա չի կարող շահարկվել.
- ընդհանուրի առումով՝ շարունակելով մնալ որպես թուլություն ուսանողը մասնագիտական որակի շրջանակում այն լրացնում է ազատամտությամբ, որը նրա մեջ ներարկում է կանխատեսելու և նախաձեռնելու կարողություն, որակներ, որոնք ներկայանում են որպես նրա ուժի անսպառ աղբյուր, որին նա արժանանում է համալսարանական կրթության ընթացքում.

Թվում է, կարող ենք նշել, որ պարզաբանումն ունի բնական իմաստ, որի դեպքում ցանկացած թուլություն ենթակա է հասարակական հոգատարության և պաշտպանվածության : Սա է առաջադրվող խնդրի փիլիսոփայությունը:

Վերջին տասնամյակի ընթացքում ԱրՊՀ ուսանողական միջավայրը ձևավորվում է թվաբանական պրոգրեսիայի սկզբունքներին համահունչ, որը պետական հնչեղության հարց է , արդարացված ժամանակի մեջ: Պարզ է, որ այն չի թուլացերծում միջավայրը, դրան համընթաց, գործադիրը մասնակի նախաձեռնություններով վերահսկում է իրավիճակը: Այդ է վկայում ներքոհիշյալ տեղեկատվությունը՝.

ուսանողների թիվը	1992-93ուս.տարի		1996-97ուս.տարի		2000-01ուս.տարի		1.01.04թ.	
	պետ.	վճար.	պետ.	վճար.	պետ.	վճար	պետ.	վճար
	1065	-	1588	92	571	1088	700	1620

Թվում է, բացահայտված են այն բեռները, որոնք շահագրգիռ ու պատասխանատու են ուսանողական միջավայրի պաշտպանության ու շարունակական առողջացման հարցի մեջ: Նշված եռաժեքության համագործակցությունը առաջադրված խնդրի հարցում հունգեցնում է այն

գաղափարին, որ մերօրյա բուհը պետք է լինի հասարակական հոգատարության մշտական առարկա, պաշտպանված պետական քաղաքականությամբ: Որպես մեկնաբանություն.

հասարակական առումով – մասնավորեցվող հասարակական կյանքը զգում է բազմիմաստ մասնավոր նախաձեռնությունների կարիք, որը հնարավոր չէ պատկերացնել նեղ ոլորտ խորացված մասնագիտացման շրջանակներից դուրս: Այն նախատեսում է, նաև նյութական ոլորտ հոգևոր արժեքների համակցման (մշակույթ) խորհուրդ, որը նշանաբանն է էվոլյուցիոն առաջադիմության, առանց որի անհնար է ունենալ հանգիստ սերնդափոխություն, մուտք ինքնավարության և ժողովրդավարության ակունքները:

ԱրՊՀ-ում 1.01.04թ.տվյալներով սովորում են 3759 ուսանողներ, որից՝ 2320 առկա ուսուցման համակարգում, 1439 հեռակա ուսուցման համակարգում: Հոդվածում բերված տվյալները վերաբերվում են առկա ուսուցման համակարգին:

– քաղաքական առումով -մերօրյա ուսանողի, ապագա մասնագետի համար առաջնահերթային նշանակության խնդիր է նրա քաղաքացիական պահվածքի հարցը, քանի որ նա անմիջական պատասխանատվություն է կրում ուրվագծվող հասարակական նոր որակի կերտման համար: Այս նկատառումից ելնելով ուսանողական միջավայրն այսօր քաղաքական կառույցին ամենից առաջ պետք է որպես գաղափարական լուսավորչական քարոզչության բնագավառ, որպես հավատի ներարկման լծակ, ուստի նրա ձևնարկումների ընտրանին պետք է նպատակաուղղված լինի այդ համարժեքության մեջ քաղաքացիական համոզմունքներ սահմանելու գործին.

– համալսարանական առումով – մեր օրերում գործում են ուսանողական միջավայրի համարման երկու աղբյուրներ՝ մասնավոր-հասարակական և պետական: Այստեղ կա ըմբռնում, բայց ուսանողների պաշտպանվածության հարցում ծնվում են անհամամասնություններ: Չէ որ, նրանք բոլորն էլ մեր թոլությունն են: Թվում է, այս հարցում ունենք մտահոգություն, որը լուծում կստանա այն դեպքում, երբ պետությունը հանդես գա պատրաստի ապրանքի (մտավոր) մեծագնորդ: Որպես ասածի ընդհանրացում համալսարանը պետք է ստանա ապրանք արտադրող կարգավիճակ, ձևավորվող շուկայում ներկայանալով որպես նրա պաշտպան, միաժամանակ, նրա մեջ տեսնելով շահույթի ստացման աղբյուր:

Առաջադրված մտահղացումը համալսարանի համար նախատեսում է կրթական համալիրի մեջ (մասնավորապես դպրոցական) ինքնուրույն սոցիալական քաղաքականություն վարելու իրավունք: Այս նախապատվությունը ինքնանպատակ համարել չի կարելի այն առումով, որ այն հանդիսանում է ամբողջ համակարգի համար ոգևորումի հիմնական աղբյուր, ինչին ձգտում են: Դա է հաստատում վերջին տարիներին ուսանողության թվակազմի շարունակական աճի մասին առաջադրվող տեղեկատվությունը.

	1992/93 ուս.տ.	2000/01 ուս.տ.	2001/02 ուս.տ.	2002/03 ուս.տ	2003/04 ուս.տ.
Ուսանողների թիվը	1065	1659	1831	2060	2320

Թվում է, այդ քաղաքականության շրջանակում բավականին կամրապնդվեն կապերը բուհի և դպրոցի միջև, կվերխվեն դպրոցական շրջանավարտների կողմնորոշումները բուհի հարցում, վերջապես այն ամենակարճ ու արդարացված ճանապարհին է կրթության համակարգում առկա դժվարությունները հաղթահարելու համար:

Ղարաբաղյան իրադարձությունները և նրա հիմնամասը կազմող Հայոց հայրենական պատերազմը մեզ համար հանդիսացան ապագայամետ նոր ապրելակերպի նախահիմքեր: Նոր իրավիճակում առաջին պլան են մղվում մարդասիրության (հումանիզմի) սկզբունքները, որոնք նախատեսում են մարդկային նոր հարաբերություններ, նոր համակեցություն: Ելնելով պատմության օրինակից, այսպիսի պահերին նախաձեռնությունն իր վրա է վերցնում նոր սերունդը, որը, բնական է պետք է օգտվի սոցիալական պաշտպանվածության աննախադեպ սանդղակից: Եվ քանի որ համալսարանական ուսանողությունը կազմում է այդ ներուժի առաջամասը, ուստի փորձենք տարակարգել այն հետևյալ տեղեկատվությամբ.[x]

	Կարգավիճակը	ուսանողների թիվը
1	Պատերազմում զոհված ազատամարտիկների	89
2	Երկկողմանի ծնողազուրկ	4
3	Մանկուց հաշմանդամ	1
4	Առաջին կարգի հաշմանդամ	-
5	Երկրորդ կարգի հաշմանդամ	4

Դասակարգումը կարելի է շարունակել, սակայն բավարարվենք նշվածով, քանի որ, համաձայն գործող օրենքի և ելնելով գիտակցումի ու հնարավորի հարաբերակցության սահմանից, այսօր համալսարանում կիրառվում է տարակարգ, որով առաջին երկու կարգերի համար նախատեսվում է ուսման վարձավճարի 100% զեղչ, իսկ մնացած կարգերի համար՝ 50% զեղչ:

Եթե ասածին ավելացնենք նաև հեռակա բաժնում սովորող նույն կարգի ուսանողների թվաքանակը, որը համապատասխանաբար կունենա հետևյալ տեսքը՝ 78-1-3-1-12, ապա միանգամայն ըմբռնելի են դառնում ցավի շրջանակները և նրան սատարելու անհրաժեշտությունը:

Ցավոք, սա մեր այսօրն է, ուստի պարտավոր ենք հարգել այն:

Վերջին ժամանակներս ԱրՊՀ ուսանողական միջավայրի նկատմամբ ընդգծված վերաբերմունք են հանդես բերում հայ բարեբարները, որոնց շնորհիվ անցած երկու տարիների ընթացքում համալսարանը մուտքագրել է 3 մլն. 457 հազար դրամին համարժեք լրավճար գումար, որը միանշանակ, նպաստի ձևով տրվել է անապահով ուսանողներին, որից օգտվել են թվով 114 ուսանողներ:

Այս հարցում համալսարանի ղեկավարությունը համագործակցում է հասարակական կազմակերպությունների, մասնավորապես, ուսանողական վարչության հետ, որպես գործընկերության սկզբունք, առաջադրելով որքան հնարավոր է ավելացնել ուսանողի պաշտպանվածության չափորոշիչները, բայց, նա կարող է օգտվել մեկից՝ իր հայեցողությամբ:

Ըմբռնվում է հայ բարեբարի՝ ձևավորվող ազնվականական միջավայրի ներկայացուցչի մտահոգությունը, որը չի կարող իրեն տենչել ազգային ցավից դուրս, քանզի կոչված է տեր կանգնել ու պաշտպանել նրան նոր հոգներից:

Համալսարանն այսօր ավելի շատ մտահոգ է ուսանողների սոցիալական պաշտպանվածության հարցերով, որը ուսանողական միջավայրում նրա կողմից տարվող քաղաքականությանը տալիս է միակողմանիություն: Ճիշտ է, մի կողմից դա պայմանավորված է մերօրյա կյանքով, մյուս կողմից՝ այդ միջավայրի չափազանց շերտավորվածությամբ: Որպես կանոն, բուհի ռազմավարությունն ունի կրթա-մասնագիտական որակի կողմնորոշում, որի նկատմամբ համալսարանում կա ըմբռնում, արվում են հաշվարկված քայլեր, որոնք, սակայն, լիարժեք համարել չենք կարող: Այսպես, ընթացիկ ուսումնական տարվա սկզբից համալսարանի գործադիր որոշմամբ հեռակա բաժնի զոհված ազատամարտիկների երեխաների առաջին կուրսի ուսանողների ուսման վարձի զեղչի չափը իջեցվել ու հասցվել է 25% (այս կարգավիճակից օգտվում են թվով 24 ուսանողներ), բացառությամբ առաջին և երկրորդ կարգի հաշմանդամ ուսանողների, որը պայմանավորված է համալսարանական կյանքից երկար ժամանակով նրանց կտրվածությամբ և կայացող կյանքի նկատմամբ նրանց պատասխանատվության ու ակտիվության գործակցի բարձրացմամբ: Կամ, այս ուսումնական տարուց սկսած սառեցվել են համալսարանի վճարովի համակարգում գերազանց սովորող ուսանողների գերազանցության կրթաթոշակները[x]: Ձեռնարկման նպատակը կայանում է նրանում, որպեսզի վաստակած միջոցները հասցնագրվեն ոչ թե անհատներին, տվյալ դեպքում ուսանողներին, այլ նրանց ընտանիքներին, որոնց վրա է ընկած այսօրվա կյանքի ամբողջ ծանրությունը: Այս քայլը, կարծես թե, հակասում է վերահսկողավորվող կյանքին, որի մասնավորեցումը հնարավոր չէ պատկերացնել առանց առողջ, ուժեղ և պաշտպանված ընտանիքների: Ինչ վերաբերվում է անհատին՝ ապա նրա օգտին առաջադրվում է նշանաբան՝ ուսանողին օգնելուց աստիճանաբար անցնել նրան հարգելու սկզբունքին:

Բուհական կրթության համակարգում ամենապաշտպանված սոցիալական միջավայրը գերազանցության կարգավիճակ ունեցող ուսանողական միջավայրն է: Սա է հուշում ինչպես համակարգի, այնպես էլ կյանքի տրամաբանությունը: Այս առումով ԱրՊՀ-ն ունի հարգանքի արժանի գուցանիշ, որի արժանահավատությունը շարունակաբար ենթարկվում է համալսարանի

Հաշվառումը կատարված է 1.01.04թ. տվյալների հիման վրա:

դեկավարության փորձաքննությանը: Այս առումով վերջին երեք տարիների ցուցանիշը ներկայացված է ներքոհիշյալ տեղեկատվությամբ[x].

N	ֆակուլտետ	2001/02ուս.տարի					2002/03ուս.տարի					2003/04ուս.տարի		
		անվան		նախ.		պետ.	անվան		նախագ		պետ.	ուս.վարձ	նախ.	պետ.
		I	II	I	II		I	II	I	II		գնոչ		
1	Հումանիտ.	4	4	2	2	12	30	30	2	3	17	22	3	60
2	Ֆիզ.մաթեմ.	4	4	1	1	16	6	7	2	2	18	2	1	30
3	Քիմ.կենս.	1	2	3	3	16	25	27	5	5	19	20	3	55
4	Բանասիր.	4	4	7	7	57	24	25	5	5	59	35	5	114
5	Տնտեսաիր..	3	4	4	4	9	16	17	4	4	1	13	3	61
6	Ճարտար.	-		-		2	2	2	-		3	1	1	5
7	Ագրարային	2	2	-		10	4	3	-		3	2	1	11

Անհատական վաստակ ունեցող այս կատեգորիան արժանի է ուշադրության համընդհանուր հարգանքի, որը տեսնում ենք.

-բարոյականի առումով - ավանդական դարձնել համալսարանից դուրս նրա ներկայացուցիչների ամենամյա հանդիպումները հանրապետության պետական այրերի հետ.

-նյութականի առումով լրացումներ կատարել համալսարանում »գերազանցության կրթաթոշակ«-ի մասին գործող կարգի մեջ, սահմանելով մասնագիտական կրթաթոշակներ միաժամանակ, նախաձեռնել կրթաթոշակի չափի սահմանման հարցում գործող օրենսդրական դաշտում առկա սահմանափակումների վերանայման հարցում.

-մասնագիտականի առումով - համալսարանի գիտական խնդրի շրջանակներում կազմակերպել գիտա-հետազոտական կենտրոն, որը կապահովի նրանց համար անհրաժեշտ աշխատանքային ծավալներ և ուղղակիորեն կնպաստի մասնագիտական որակի բարձրացման և գիտական կադրերի պատրաստման աշխատանքներին:

Թվում է պարզաբանումի մեջ ապահովված է համակողմանիության սկզբունքը, որն անկասկած, առաջիկայում կներկայանա որպես համալսարանական նոր որակի առանցք:

Համալսարանի ուսանողությունը պաշտպանված չէ համակարգում գործող գիտելիքների ստուգման և գնահատման չափորոշիչի առումով: Այն գործում է բավարարի օգտին, քաջալերելով ուսանողությանը դեպի միջակություն, ներարկելով նրանց մեջ պարտադիր լսարանային պահվածքի որոնք նրան դարձնում են պահպանողական համակարգ: Այդ մասին է վկայում բերված տեղեկատվությունը[x].

N	Ֆակուլտետներ	ուս. թիվը	անբավ.	խառը	լավ և գեր.	գեր.
1	Հումանիտար	454	67	207	120	60
2	Ֆիզ.մաթեմատիկական	324	140	115	39	30
3	Քիմ.կենսաբանության	355	67	139	94	55
4	Բանասիրական	601	60	279	148	114
5	Տնտեսաիրավաբանական	321	60	135	65	61
6	Ճարտարագիտական	154	54	86	9	5
7	Ագրարային	111	37	47	16	11

x բացառությամբ »Նախագահական կրթաթոշակի«(թվով 20), որին արժանանում են պետական վճարովի համակարգերում սովորող առավել շնորհաշատ ուսանողները:

x բերված ցուցանիշների մեջ առկա են որոշակի վերապահումներ, կապված համալսարանի ներսում կատարված կառուցվածքային փոփոխությունների, մասնավորապես, նոր ֆակուլտետների՝ ճարտարագիտական և տնտեսաիրավագիտական ձևավորման հետ:

Փաստերը խոսում են վերը նշված ընդհանրացման օգտին, միաժամանակ պարտադրելով դրսևորումներ, նոր մոտեցումներ առաջադրելու համար: Քանի որ մերօրյա կյանքի խորհուրդը կայանում է ապրանքային արտադրության կազմակերպման մեջ, ուստի, ուսանողը ուսումնասիրության առաջին իսկ տարում պետք է ներթաքվի մտավոր ապրանքի արտադրության գործընթացի մեջ, որով նրա առողջ մասը հակադրվելով միօրինակ լսարանային աշխատանքին, կպահանջի լրացուցիչ աշխատանքային ծավալներ, որոնց հայտնաբերումն ու առաջադրումը կներկայանան որպես համալսարանի առաջնահերթային խնդիրներ: Մեր տարբերակում, սա նշանակում է նոր մոտեցում համալսարանական կրթության նկատմամբ, որտեղ նախապատվությունը տրվում է ուսանողների կողմից կատարված մտավոր-մասնագիտական աշխատանքին, դրան համընթաց, կորցնում են իրենց ազդեցությունը քննաշրջանային բարձրակետերը: Այս իրավիճակում առաջին պլան են մղվում ուսանողների ակտիվության գործակիցը, նրանց շահագրգռվածությունը մասնագիտական որակի մեջ խորանալու հարցում, կորցնում է իր մենաշնորհը գործող գնահատման համակարգը, ճնշվածությունը փոխարինվում է ազատականացմամբ ու իր կողմից վերահսկվող աշխատանքային գործունեության արդյունքներից ոգևորված ուսանողությունը բացառում է միջակությունը, անցնելով նոր որակի:

Համալսարանում այսօր գործում են բազմաթիվ ծառայություններ, որոնք կոչված են սպասարկելու և պաշտպանելու ուսանողությանը: Այդ է վկայում ներքոհիշյալ տեղեկատվությունը[x].

Ծառայություններ	նրանց քանակը	սպասարկող թվակազմը
դեկանատ	7	19
ամբիոն	21	361
գրադարան	1	5
ընթերցասրահ	3	3
կաբինետ	14	10
լաբորատորիա	15	9
համակարգչային կենտրոն	3	3

Որպես ընդհանուր թուլություն, կարելի է նշել, որ հիշյալ ծառայությունները գործում են միմյանցից անջատ, որը պայմանավորված է համալսարանական համակարգող կենտրոնի բացակայությամբ, որը հնարավոր չէ պատկերացնել նրա գիտական խնդրի շրջանակներից դուրս: Հաջորդ ընդհանուր թուլությունը կայանում է նրանում, որ այդ ծառայությունները հիմնականում գործում են ուսումնական պարապմունքների շրջանակում, որոնց ավարտից հետո նրանց մի մասը մատնվում են անգործության : Եվ նորից պատճառը համալսարանական գիտական խնդրի բացակայությունն է:

Ուսանողների սոցիալական պաշտպանվածության հարցում լուրջ դերակատարում ունի համալսարանում գործող ուսուցման վճարովի համակարգը: Նշենք, որ այդ համակարգից ստացվող մուտքերի 27-29%-ը ողողակի, բայց ոչ անձնավորված, վերադարձվում է ուսանողությանը: Հաշվարկից դուրս են ուսանողների օգտին կատարված անուղղակի ծախսերը: Համալսարանի գործադրի պահանջով , ընթացիկ ֆինանսական տարում ձևավորվել ու գործում է ուսանողական վարչության բյուջեն (մոտ 1մլն.դրամ), որը նախատեսվում է ծախսել ուսանողների կենցաղային և հոգևոր-մշակութային ոլորտներում ծագած հարցերի կարգավորման վրա : Այդ, արտաբյուջետային մուտքերի մասով համալսարանը մեծ անելիքներ ունի հասարակությանը ներկայանալու և նրա հետ երկխոսելու առումով: Պահն է, եթե չենք ուշացրել , համալսարանում գործող բոլոր մասնագիտացումների համար իրականացնել հաշվարկված գնագոյացման քաղաքականություն, սահմանելով մինիմում (ներկայիս ծառայությունները) և մաքսիմում սահմանագծեր, որովհետև, առանց հաշվարկի հնարավոր չէ կանխատեսել: Դա անհրաժեշտ է ազատ երկխոսելու և ներհամալսարանական կյանքում կողմնորոշվելու համար:

Մտահոգության հարց է ուսանողական միջավայրի սեռային համարժեքությունների միջև շարունակաբար խորացվող անհամամասնությունը: 1.01.04թ. դրությամբ համալսարանում սովորում են 1659 ուսանողուհիներ, 661 ուսանողներ, որոնք հավաքագրված են ֆակուլտետների մեջ, հետևյալ կազմով.

[x]բերված տեղեկությունները վերաբերվում են 2003/04 ուսումնական տարվա առաջին կիսամյակի արդյունքներին:

[x] հաշվարկումից դուրս է մնացել համալսարանի վարչատնտեսական բլոկը:

Ֆակուլտետներ	ուս-ուժի	ուսանող
Հումանիտար	320	134
Բանասիրական	582	19
Տնտեսագիտական	200	121
Ճարտարագիտական	23	131
Ֆիզ.մաթեմատիկական	195	129
Քիմ.կենսաբանության	295	60
Ագրարային	44	67
Ընդամենը	1659	661

Պահի իդեատեսությունը վկայում է, որ այսօր մենք ունենք կենսուրախ , կատարելիքի առումով պատասխանատու ուսանողուհիներ և կայացած, բայց գործնականի մասով ինքնամփոփ ուսանողներ: Երևույթն ունի իր հասկանալի բացատրականները՝ տարբեր են նրանց մտահոգության ու ներարկման աղբյուրները: Հասկանալի է, որ այս տարբերակման հիմքում ընկած են օբյեկտիվ գործելակերպերը մեր պատերազմն ու զարաբաղյան հարցի քաղաքական լուծման մեջ առկա անորոշությունը: Սակայն կյանքի համարժեք զարգացման ընթացքը պահանջում է լուծումներ գտնել այդ երկիմաստության կարգավորման հարցում, այլապես իմաստավորվող կյանքի մեջ այն կտեղափոխվի որպես բացասական երևույթ: Այսօր համալսարանական շատ լսարաններ վեր են ածվում »օրիորդական լսարաններից«, քանի որ հայրենիքի նկատմամբ իրենց պարտքը կատարելուց հետո շատ պատանիներ հրաժարվում են ուսանել ուսուցման առկա համակարգում, տեղափոխվելով հեռակա համակարգ: Պարզաբանումները վկայում են , որ այս կողմնորոշումը շատերի համար կապված չէ որևէ կոնկրետ խնդրի հետ, այլ անորոշության հետևանք է: Այս մասով ուսանողը զգում է պաշտպանության կարիք, որը պետական մենաշնորհի խնդիր է և ինչքան տեղական ենք, այս ուղղությամբ կա մտահոգություն ու ձեռնարկվում են գործնական քայլեր: Այս նեթատեքստի մասով՝ համալսարանին մտահոգող միակ հարցը»Ռ-ազմագիտության« ամբիոն ունենալու հարցն է , որը լուծումներ կտա , ինչպես համալսարանական, այնպես էլ հանրապետական նշանակության մի շարք կարևոր խնդիրների:

Ուսանողների սոցիալական պաշտպանվածության համատեքստի մեջ կարևոր բաղադրիչներն են նաև նրանց սենդի և հանրակացարանային պայմանների բարելավման հետ կապված հարցերի կարգավորումը: Երկու դեպքերում էլ նախապատվությունը, , միանշանակ, տրվում է հայ բարեգործի, որի կամեցողությունից ու ձեռներեցությունից է կախված այդ ծառայությունների լիարժեք գործունեությունը: Համալսարանի ուսանողությունն այսօր օգտվում է այդ ծառայություններից, որոնց օգտակարության գործակիցը, սակայն, բավականին ցածր է: Հայ ձեռներեցը պարտավորվածություն և իրավունք ունի մտնելու ուսանողական միջավայր, քանի որ նա կոչված է գործուն մասնակցություն ունենալ ազգային ինտելեկտի ձևավորման գործընթացին: Ինչ վերաբերվում է վերոհիշյալ ծառայություններին, ապա նրանց ակտիվության գործակիցը մենք տեսնում ենք այդ օբյեկտների մասնավորեցման մեջ, որոնց տերերը՝ բարեգործ-սպիտակամատները, նախընտրելով պարզ վերարտադրության սկզբունքները, իրենց գործելակերպի մեջ նախապատվությունը կտան ոչ թե մասնավոր շահին, այլ սենդին ծառայելու հայեցակարգին:

Բացահայտված է խնդիրը: Պարզաբանված են նրա գործարկման շրջանակներն ու գործադիր կառույցները: Խնդրի լուծման մեջ գործնականություն ներարկելու համար, անհրաժեշտ է, որ այն վերածվի գաղափարի ու ներկայանա որպես հայեցվունք, որը կերաշխավորի նրան կիրարկման գործելակերպ: Որպես ընդհանրացում ամբողջ աշխատանքից՝ ուսանողին վերապահած »թուլություն« արտահայտությունը, հնարավոր է փոխարինել »հարգանք« գործակցով, այն որակելով որպես բարոյա-իմացաբանական շրջադարձ:

Ամփոփում

Կենսունակ կարելի է համարել այն հասարակական միջավայրը, որն ունի պաշտպանված ու փստաենի սոցիալական կառուցվածք : Դա նշանակում է. հասարակական առաջընթացի ցանկացած փուլում արժեքավորվել է մարդկային գործոնի, որպես առաջմղիչ ուժի դերը: Երևույթն առավել քան կարևորվել է որակական անցումների պահերին, երբ մարդ արժեքից պահանջվել է ոչ միայն գործնականություն, այլ նաև ապագայամետ տեսական հիմնավորումներ: Այդ առումով կարևորվում է ՀՊ հանրապետության այսօրը, որը ներկայացնող սոցիալական միջավայրը, մասնավորապես, նրա որակական բաղադրամասը կազմող ԱրՊՀ ուսանողական ներկայացուցչությունը գիտում է հասկացողության պաշտպանվածության կարիք, որն էլ կազմում է հոգեվիճակի հիմնական նպատակը: